ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
**ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

MINISTRY OF EDUCATION AND SCIENCE OF REPUBLIC OF ARMENIA
**YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY AFTER MKHITAR HERATSI**

Հայաստան, 0025, Երևան, Կորյունի փ. 2 • 2 Koryun St., Yerevan, 0025, Armenia • Tel/Fax (374.10) 582532 • URL: www.ysmu.am • e-mail: info@ysmu.am

թիվ 09/777

«30» 03 2015 թ.

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ 11/13» ծածկագրով
շրջանակային համաձայնագրերի միջոցով
գնում կատարելու ընթացակարգի հնարավոր
մասնակիցների ղեկավարներին

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում **«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ-ի** կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու Գնումների աջակցման կենտրոնի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքները:

*Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում «ՇՀԱՊՁԲ-11/13-3(ԵՊԲՀ)»*

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել **ք. Երևան, Կորյունի 2 հասցեով, վարչական մասնաշենք, 2-րդ հարկ գնումների բաժին, մինչև 2015թ ապրիլի 09-ը , ժամը 10:45-ը:** *Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Վ Դանիելյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում՝ ըստ ստացման հերթականության, ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:*

Հայտերը կբացվեն **«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ-ի շենքում, ք. Երևան, Կորյունի 2 հասցեով, վարչական մասնաշենք, 2-րդ հարկ, 2-րդ դահլիճում, ապրիլի 09-ին, ժամը 10:45-ին:**

*Գնման առարկա է հանդիսանում «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ-ի կարիքների համար գրասենյակային կահույքի ձեռքբերումը:*

*«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» Հիմնադրամ-ի կարիքների համար գրասենյակային կահույքի մատակարարման (մատուցման, կատարման) (որոնք կազմված են 2 չափաբաժնից), տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանները ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներակայացված է հրավերի (ծանուցման) N 1 հավելվածում:*

*Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝*

*ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային հասցեն,*

*բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:*

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/13» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

*Մասնակիցների կողմից որպես համարժեք ապրանքներ ներկայացնելու դեպքում գնային առաջարկում ներառել նաև դրանց տեխնիկական բնութագրերի նկարագրությունները ,պարտադիր նշելով "համարժեք" բառը:*

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

*«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ marketing.ysmu@gmail.com:*

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ 7)-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

*Հարգանքով ՝*

**Ռեկտորի Ժ/Պ՝** **Մ.Զ. Նարիմանյան**